ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

30.09.2014 թ.
ք.Արտաշատ

Մարզխորհրդի նիստին մասնակցում էին մարզխորհրդի 94 անդամներ, ՀՀ փոխվարչապետ տարածքային կառավարման նախարարի խորհրդական Ա.Մնացականյանը, մարզային ենթակայության հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարներ, ՋՕԸ-ի տնօրեններ, մարզպետարանի պատասխանատու աշխատողներ, լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Բերքահավաքի և մթերումների ընթացքի մասին:
   / Զեկ. գյուղ. և բնապահպանության վարչության պետ Հ. Տերտերյան/

2. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին:
   / Զեկ. ընտանիքի, կանանց և երեխաների իրավ. պաշտ. բաժնի պետ Գ.Պողոսյան /

3. Մարզի համայնքների 2014թ. ութ ամիսների բյուջեների կատարման մասին:
   /Զեկ. ֆին. և սոցիալ-տնտեսական զարգ.վարչության պետ Գ. Եղիազարյան /

4. 2014թ. II եռամսյակում մարզի համայնքներում մարզպետարանի կողմից իրականացված վարչական հսկողության արդյունքների մասին:
   / Զեկ. ՏԻ ԵՎ ՀԳՄ հարցերով վարչության պետ Ա. Լալայան /

Հայտարարություններ.

1.Լսեցին՝

Բերքահավաքի և մթերումների ընթացքի մասին գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Հ.Տերտերյանի զեկուցումը:

/կցվում է/

Արտահայտվեցին՝ Արարատի մարզպետ Ռ.Աբրահամյանը, ՋՕԸ-ի տնօրեններ, համայնքների ղեկավարներ:

Հանձնարարվեց

1.Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Հ.Տերտերյանին՝

● Ամենօրյա ուշադրության կենտրոնում պահել բերքահավաքի, մթերումների, ինչպես նաև համայքներում՝ հատկապես աշնանացանի հետ կապված, ոռոգման ջրի մատակարարման գործընթացները:

● Ի գիտություն ընդունվեց ՋՕԸ-ի տնօրենների հայտարարությունը, որ մարզում աշնանացանի ոռոգման հետ կապված՝ համակարգում խնդիրներ չկան:

2.Լսեցին՝

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Գ.Պողոսյանի զեկուցումը:

/կցվում է/

Արտահայտվեցին՝ Արարատի մարզպետ Ռ.Աբրահամյանը, համայքների ղեկավարներ:

Հանձնարարվեց

1.Մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Գ.Պողոսյանին՝

● 3-օրյա ժամկետում ուսումնասիրել, համապատասխան համայնքների ղեկավարների հետ համատեղ քննարկել և օրենքի սահմաններում կարգավիճակ տալ արտերկրում ժամանակավորապես գտնվող ընտանիքների՝ այլ մարդկանց խնամքի տակ հայտնված երեխաներին:

3.Լսեցին՝

Մարզի համայնքների 2014թ. ութ ամիսների բյուջեների կատարման մասին ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Գ.Եղիազարյանի զեկուցումը:

/կցվում է/

Արտահայտվեցին՝ Արարատի մարզպետ Ռ.Աբրահամյանը, համայնքների ղեկավարներ:

Հանձնարարվեց

1.Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Գ.Եղիազարյանին՝

● Ս/թ հոկտեմբերի 2-ին՝ ժամը ժամը 11:00-ին, բյուջեների հավաքագրման հետ կապված խնդիրներ ունեցող թվով 22 համայնքների հետ կազմակերպել քննարկում՝ գտնել լուծումներ, վերլուծել արդյունքները և ներկայացնել տեղեկատվություն:

● Ձեռնարկել միջոցառումներ համայնքների բյուջեների կատարման ուղղությամբ:

4.Լսեցին՝

2014 թ. 2-րդ եռամսյակում մարզի համայնքներում մարզպետարանի կողմից իրականացված վարչական հսկողության արդյունքների մասին ՏԻ ԵՎ ՀԳՄ վարչության պետ Ա.Լալայանի զեկուցումը:

/կցվում է/

Արտահայտվեցին՝ Արարատի մարզպետ Ռ.Աբրահամյանը, համայնքների ղեկավարներ:

Հանձնարարվեց

1.ՏԻ ԵՎ ՀԳՄ վարչության պետ Ա.Լալայանին՝

● Հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա.Օրդոյանի հետ համատեղ 2-օրյա ժամկետում ստեղծել աշխատանքային խումբ, քննարկել համայնքերում վարձակալությամբ տրված հողամասերի նոտարական վավերացման և պետական գրանցման հետ կապված հարցերը:

● Ուսումնասիրել և ներկայացնել համապատասխան առաջարկություն այն համայնքների վերաբերյալ, որոնց ֆինանսական միջոցները չեն բավարարում համայնքի քարտեզագրման և նմանատիպ այլ գործընթացների իրականացման հարցում:

● Կրկնայցերի միջոցով անհրաժեշտ վերահսկողություն իրականացնել համայնքերում վարչական ուսումնասիրությունների արդյունքներով տրված հանձնարականների կատարման նկատմամբ:

2.Քաղաքաշինության վարչության պետ Լ.խաչատրյանին՝

ՏԻ ԵՎ ՀԳՄ վարչության պետ Ա.Լալայանին՝

● Համայնքների ղեկավարների հետ համատեղ ուսումնասիրել և ստեղծել քաղաքաշինական օրինակելի կանոնադրություն:

Հայտարարությամբ հանդես եկավ Արարատի ՄՓՎ պետ փ/ծ գնդապետ Մ.Մարգարյանը:

Մարզխորհուրդը ամփոփեց Արարատի մարզպետ Ռ.Աբրահամյանը:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ